բայց նոյն ամսուն 26ին ուղղեց առ Կորչաքով իշխանն 'ի Վիեննա ծանուցագիր մը պատասխանի Ռատրիոյ խնդրոցը որ խաղաղութեան չորս պայմաններ առաջարկեր էր արևմտեան պետութեանց կողմանէ, և որոնց ընդունելութիւնը Բեգերսպուրկի խորհրդարանը կը համարեր անմիաբանելի իր պատուոյն ու միանգամայն իր նիւթական և քաղաքական շահուն հետ։

Շատ գործառնութիւններէ ետև, որոնց մէջ կոմն Ալէքսէլրոտ բոլոր իր ազդեցութիւնն 'ի գործ դրեր էր, Սեւաստոպոլի անկումն պատճառ եղաւ Խարիզու դեսպանաժողովոյն և խաղաղութեան՝ որ ստորագրուեցաւ յ30 մարտ 1856։ Ընկէ մէկ տարի առաջ՝ Նիկողայոս կայսրը գերեզման իջեր էր, և որդին Ալեքսանդր Բ իրեն յաջորդեր էր (2 մարտ 1855)։ Կոմն Ալէքսէլրոտ՝ մեր ժամանակին քաղաքագիտական ամենամեծ գործոցն մասնակից ըլլալէն վերջն՝ յարմար չսեպեց գործողութեանց բեռն շարունակ վրան տանելու. իրեն յաջորդ մը խնդրեց, որ տրուեցաւ 'ի 29 ապրիլի 1856, և էր Ալեքսանդր Կորչաքով իշխանն, արտաքին գործոց պաշտամանն համար, որուն մէջ 1850 տարւոյն ապրիլ ամսէն 'ի վեր ուներ իբր օգնական առանձին խորհրդականն և ծերակուտի անդամ Սենիավին։ Այց վեհափառ Կայսրը միշտ ուզեց պահել անոր կայսրութեան քարտուղարի պաշտօնն։

Ալէքսէլրոտի եռանդը և անձին նուիրումն իր քաղաքական ընթացիցը մէջ որ յիսունուվեց տարի տևեր էր, զինքը արժանի ըրեր էին բարձր և շքեղ վարձատրութեանց։ Ընդունած էր Ռուսիոյ և բոլոր Եւրոպայի գրեթէ ամէն պատուանշանաց աստիճանքը, և մասնաւորապէս Լեգէոն-Պատուոյ մեծ խաչն։

Ընտանացեր էր Մարիամ-Կուրիէվ կոմտուհւոյն հետ, որ կայսերութեան Եւրոպայի պաշտօնէի մը դուստրն էր, և որ կորսընցուց 5-6 սեպտեմբերի գիշերը 1849 տարւոյն. որդի մը ունեցաւ Տիմիտրի Ալէքսէլրոտ անուամբ ծնեալ յամին 1816, որ տէրութեան խորհրդական է, և Ռուսիոյ կայսեր սենեկապետ. և երկու աղջիկ, մէկն է կոմտուհին Միխայէլ Կորսաքովիչ, միւսն է կոմտուհին Աէպախ, ամուսին Սաքսի պաշտօնակալին 'ի Բարիզ։

Երկրագործական փորձ մը։

Ընդարձակ Երկրագործութեան[1] ըսուած գաղղիական օրագրին մէջ կը կարդանք թէ անցեալ ապրիլի մէջ երկրատէր մը եզական փորձ մըն է ըրեր, որուն արդասիքն ամէն ակընկալութենէ վեր եղաւ։ Չորս գետնախնձոր տնկեց ոլոռնցմէ երկուքը կը բովանդակէին իւրաքանչիւրը մէյմէկ բակլայ, և միւս երկուքը մէյմէկ ոլոռն[2]։ Միչ ժամանակէն բակլաներն ու ոլոռներն աճեցան զօրաւոր ընձիւղներով, և երկրատիրոջ սեղանոյն չորս պնակ առատ կերակուր մատակարարեցին։ Այց աւելի դիտելու արժանի բանն էր որ գետնախնձորները զարմանալի կերպով բուսաբերեցին, և հիւանդութենէ չբռնուեցան, և իրենց ընձիւղները գունաթափութիւն չկրեցին։ Այս որ մեծն է՝ անոնց խաւարտներն արտաքոյ կարգի բազմացան. առաջինը տուաւ յիսունրուբի խաւարտ, երկրորդը՝ երեսուն, երրորդը՝ քսանուինը, չորրորդը՝ քսանըհինգ ամէնն ալ քաջառողջ։ Այսպիսի է, կ'ըսէ վերոյիշեալ օրագիրն, այս փորձիս եղքը, որ երկրորդ անգամ այս տարի պիտի կրկնուի աւելի ընդարձակ կերպով։

1. Գղ. Moniteur de l'Agriculture.
2. Տաճ. Պիղելիա։